ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 13-ին, շաբաթ օրը, «Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլչուջյանը՝ «Լոյս ի լուսոյ, ի Հօրէ առաքեցար» բնաբանով։*

***

Հունվարի 14-ին, հինգշաբթի, «Տօն ծնընդեան Յովհաննու Կարապետին»: *Մայր Տաճարում, Ս. Հովհաննես Մկրտչի սեղանի վրա, պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։*

***

Հունվարի 17-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։*

***

Հունվարի 24-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց՝ «Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդի Իւր յաշխարհ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ Նովա» բնաբանով։*

***

Հունվարի 31-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը։*

***

Փետրվարի 7-ին, կիրակի, *Մայր Տաճարում իր անդրանիկ պատարագը մատուցեց հոգեշնորհ Տ. Ոսկան աբեղա Գալփաքյանը և քարոզեց՝ «Եթէ ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա» բնաբանով։*

***

Փետրվարի 14-ին, կիրակի, «Տեառնընդառաջ»: *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց՝ «Այսօր ի Տաճարն եկիր Փրկիչ, և ծերունւոյն ի գիրկս ընկալեալ ասէր. Արդ արձակես զծառայս քո Տէր» շարականի խոսքերը վերցնելով որպես բնաբան։*

***

Փետրվարի 21-ին, կիրակի, *Մայր Տաճարում, իր անդրանիկ պատարագը մատուցեց հոգեշնորհ Տ. Զարեհ աբեղա Պարոնյանը և քարոզեց՝ «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» բնաբանով։*

***

Փետրվարի 25-ին, հինգշաբթի, «Տօն Վարդանանց զօրավարացն մերոց»: *Մայր Տաճարում, ազգային-եկեղեցական մեծ տոնի առթիվ, պատարագեց և քարոզեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» բնաբանով։*

Հավարտ սուրբ պատարագի, Իշման Ս. Սեղանի առաջ, տեղի ունեցավ հայրապետական մաղթանք։

Ժամը 2-ին, Հոգևոր Ճեմարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Վարդանանց հերոսամարտի հիշատակին։ Գործադրության դրվեց օրվա խորհուրդը նշող գեղարվեստական հայտագիր, բաղկացած մեներգերից, խմբերգերից և արտասանություններից։

Օրվա գլխավոր բանախոսն էր Հոգևոր Ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս պր. Գրիգոր Գյուլյանը, որը գեղեցկորեն

վեր հանեց Վարդանանց տոնի խորհուրդը և նշանակությունը։

Հանդիսությունը փակվեց Վեհափառ Հայրապետի պատգամով և օրհնությամբ։

***

Փետրվարի 28-ին, կիրակի («Բուն բարեկենդան»), *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլչուջյանը՝ «Որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալն նորա ի չար ճանապարհէն և զկեալն» բնաբանով։*

***

Մարտի 7-ին, կիրակի («Արտաքսման»), *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Սերայդարյանը՝ «Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր» բնաբանով։*

***

Մարտի 14-ին, կիրակի («Անառակին»), *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը՝ «Կերիցուք և ուրախ լիցուք, զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ» բնաբանով։*

***

Մարտի 20-ին, շաբաթ, *երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը Իր վերջին ուղևորության մասին խոսեց Հոգևոր Ճեմարանի սաներին ու միաբաններին և ունկնդրվեց մեծ ուշադրությամբ։*

***

Մարտի 21-ին, կիրակի («Տնտեսին»), *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ «Տո՛ւր զհամար տնտեսութեան քո» բնաբանով։*

***

Մարտի 28-ին, կիրակի («Դատաւորին»), *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը։ Քարոզեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը՝ «Էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա» բնաբանով։*

***

Ապրիլի 3-ին, շաբաթ, «Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեռոյ սոսկալի շարշարանացն և մտիցն ի Վիրապն»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլչուջյանը։

Սուրբ պատարագի ընթացքում, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը սարկավագ ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի երկրորդ լսարանի ուսանողներ Գրիգոր Բունիաթյանին և Եղիշե Բաղրամյանին։ Սրբազան հայրը, ձեռնադրությունից հետո, խրատական խոսեց «Ուխտս դիք և կատարեցէք» բնաբանով։

Պատարագից հետո, նորընծա սարկավագները ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նրա հայրական օրհնությունը։

Շնորհունակ Եղիշե սարկավագ Բաղրամյանը ծնվել է 1944 թվականին Իրանի Թավրիզ քաղաքում, Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1959 թվականին։

Շնորհունակ Գրիգոր սարկավագ Բունիաթյանը ծնվել է 1946 թվականին Էջմիածնում, Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1960 թվականին։

***

Ապրիլի 4-ին, կիրակի («Գալստեան»), *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը, իսկ քարոզեց հոգեշնորհ Տ. Ոսկան աբեղա Գալփաքյանը՝ «Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն՝ ի կեանսն յաւիտենականս» բնաբանով։*

***

Ապրիլի 7-ին, շաբաթ, «Աւետումն Ս. Աստուածածնի», *Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։*

***

Մայիսի 5-ին, շաբաթ, *Մայր Աթոռից հրաժեշտ առնելով մեկնեցին հոգեշնորհ Տ. Տարոն վարդապետ Ճերեճյանը, Արշամ Ճիզմեճյանը, Վահագն Կարապետյանը (Փարիզ), Գաբրիել սարկավագ Լուսարարյանը (Մարսել) և Հայաստան Վարդանյանը (Լոնդոն), որոնք Վեհափառ Հայրապետի կողմից հրավիրվել էին Մայր Աթոռ և Մայր Հայրենիք։*

***

Մայիսի 9-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ոսկան աբեղա Գալփաքյանը՝ «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» բնաբանով։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 16-ին, կիրակի, «Տօն է երեման Սրբոյ Խաչին»:

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 17-ին, երկուշաբթի, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը ուխտի գնացին Ս. Գեղարդի վանքը։

***

Մայիսի 17-ին, երկուշաբթի, Բեյրութ մեկնեց Տ. Ոսկան աբեղա Գալփաքյանը։

***

Մայիսի 23-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 24-ին, երկուշաբթի, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին 1964—1965 ուսումնական տարվա ամավերջի քննությունները, որոնք տևեցին մինչև հունիսի 5-ը։ Առաջին օրը, քննությունների հանդիսավոր բացմանը ներկա եղավ Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներով։ Նույն օրը, երկրորդ լսարանի ուսանողները փայլուն հաջողությամբ քննություն հանձնեցին Վեհափառ Հայրապետի տրամարանություն առարկայից։

***

Մայիսի 27-ին, հինգշաբթի, «Համբարձում»:

Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը՝ «Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում կամ ո՞վ ելցէ ի լեառն սուրբ քո» ընթերցանով։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց հայրապետական մաղթանք՝ Աթոռի Սսից Ս. Էջմիածին փոխադրության տարեդարձի առթիվ։

***

Մայիսի 30-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Գուրգեն քահանա Գուտուլյանը (Կալիֆոռնիայից, ԱՄՆ), որն ուխտի էր եկել Ս. Էջմիածին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հունիսի 5-ին, շաբաթ, առավոտյան ժամը 12-ին, Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ ամավերջի հանդիսություն, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի նախագահությամբ։

Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը ներկայացրեց Հոգևոր Ճեմարանի 1964—1965 թվականների ուսումնական տարեշրջանի ընդհանուր զեկուցագիրը։ Ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ երաժշտության դասատու Խորեն Հակոբյանի, կատարեց Կոմիտասյան և Եկմալյան հետևյալ խմբերգերը. «Առավոտուն բարի լուս», «Հարսին երգը», «Առնեմ երթամ», «Հարսանեկան երգեր» և «Զեյթունցիներ»։

Նախագահող սրբազանը նվերներ հանձնեց ուսման գերազանցիկներին։

Ամավերջի հանդիսությունը վերջացավ Ճեմարանի քայլերգով, սրբազան հոր խրատականով և «Պահպանիչ»-ով։

***

Հունիսի 5-ին, շաբաթ, երեկոյան ժամը 5-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Վատիկանի քրիստոնեական միության քարտուղարության քարտուղար Տ. Հովհաննես եպիսկոպոս Վիլլեբրանդը և հոգեշնորհ Տ. Դյուբե վարդապետը, ընկերակցությամբ Մոսկվայի Ռուսաց Պատրիարքարանի ներկայացուցիչների։

Երևանի օդանավակայանում, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, հարգելի հյուրերին դիմավորեցին Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը, Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և դիվանապետ Հայկ Առաքելյանը։

Մայր Տաճարում իրենց ուխտը և աղոթքը կատարելուց հետո, հարգարժան հյուրերը ընդունվեցին Վեհարանում Վեհափառ Հայրապետի կողմից։ Այնուհետև տեղի ունեցավ ջերմ զրույց Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Վատիկանի ներկայացուցիչների միջև։

***

Հունիսի 6-ին, կիրակի, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Բաբվի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Հովհաննես եպիսկոպոս Վիլլե-

բրանդը, Հայր Դյուբեն և նրանց ուղեկցող՝ Լուսաց Պատրիարքարանի ներկայացուցիչները։

Հավարտ սուրբ պատարագի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը մասնավոր տեսակցություն ունեցավ Վատիկանի քրիստոնեական միության քարտուղարության ներկայացուցիչների հետ։

Ժամը 3-ին, հյուրերի պատվին տրվեց ճաշկերույթ։

Ժամը 4-ին հյուրերը հրաժեշտ առին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից և ամսի 7-ին մեկնեցին։

Հյուրերը այցելեցին նաև Երևանի եկեղեցիները, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Գեղարդի վանքերը և Զվարթնոցի ավերակները։

**
*

Հունիսի 6-ին կիրակի, երեկոյան ժամը 5,30-ին, Վեհափառ Հայրապետը, Բուլղարիայի Ամենապատիվ Տ. Կիրիլ և Ռումինիայի Ամենապատիվ Տ. Հուստինիան պատրիարքների, ինչպես նաև Բուլղարիայի և Ռումինիայի հայերի թեմական խորհուրդների հրավերներով, հովվապետական այցելության մեկնեց Բուլղարիա և Ռումինիա։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները և Երևանի հոգևորականությունը։ Նորին Ս. Օծության ճանապարհեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու Գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

Սույն ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին ընկերակցում են Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը և Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը։

**
*

Հունիսի 13-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

**
*

Հունիսի 14-ին, երկուշաբթի, «Տօն է սրբոց կուսանացն Հռիփսիմեանց»։ Ս. Հռիփսիմեի Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը՝ «Հռիփսիմէ մեծ խորհուրդ և անուն ցանկալի» բնաբանով։

**
*

Հունիսի 15-ին, երեքշաբթի, «Տօն է սրբոց կուսանացն Գայիանեանց»։ Տոնի առթիվ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

**
*

Հունիսի 17-ին, հինգշաբթի, Ս. Շողակաթի տաճարի տոնի առթիվ, համանուն եկեղեցում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։